«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ» ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթն անցկացվում է յուրաքանչյուր տարի:

Ամենամյա մրցույթի նպատակն է աջակցել մարզային երիտասարդական կյանքի ակտիվացմանը, երիտասարդների կարողությունների բացահայտմանը և համակողմանի զարգացմանը, խթանել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից երիտասարդական քաղաքականության ոլորտում իրականացվող աշխատանքների և ծրագրերի ծավալների մեծացմանը, նպաստել համայնքային երիտասարդական ենթակառուցվածքների ստեղծմանը և զարգացմանը (համայնքային երիտասարդական կենտրոններ/ միջավայրեր, քաղաքացիական հասարակության կառույցներ), խրախուսել տեղական երիտասարդական աշխատանքի ձևավորմանն ու զարգացմանը, երիտասարդական նորարարական գաղափարների կյանքի կոչմանը և այլն:

Մայրաքաղաք Երևանը չի մասնակցում Մրցույթին:

Նույն քաղաքը չի կարող երկու անգամ անընդմեջ ճանաչվել «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք»:

Երիտասարդական մայրաքաղաք հռչակված քաղաքը (ներկայումս ավելի լայն իմաստով ենք դիտարկում՝ նաև համայնքը) համարվում է երիտասարդական միջոցառումների և նախաձեռնությունների իրականացման հիմնական վայր:

Մրցույթն իրականացվում է 2014 թվականից ի վեր: ՀՀ առաջին երիտասարդական մայրաքաղաքը եղել է Սիսիանը, հաջորդիվ՝ Ստեփանավանը (2015), Գյումրին (2016), Չարենցավանը (2017), Իջևանը (2018), Վանաձորը (2019), 2020-ին մրցույթը չի կայացել, այնուհետ՝ Կապանը (2021), Հրազդանը՝ 2022-ին և Մեծամորը՝ 2023թ.:

Յուրաքանչյուր տարի մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքների իրականացման համար ստեղծվում են մրցութային հանձնաժողով և փորձագիտական գնահատման խումբ:

Մրցութային հանձնաժողովը բաղկացած է 7 հոգուց, այդ թվում՝ երեք ներկայացուցիչ ՀՀ ԿԳՄՍՆ-ից, մեկ ներկայացուցիչ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից, մեկ ներկայացուցիչ ՔՀԿ-ներից, մեկ ներկայացուցիչ Նախարարին կից հասարակական խորհրդից, մեկ ներկայացուցիչ՝ զարգացման գործընկերներից:

Փորձագիտական գնահատման խումբը կազմված է 5 փորձագետից: Վերջիններիս ընտրում է մրցութային հանձնաժողովը՝ իր կողմից սահմանված պահանջներին համապատասխան, իսկ փորձագետների հավաքագրումը իրականացվում է բաց կանչով (հայտարարությունը՝ ՀՀ ԿԳՄՍՆ կայքում, erit.am-ում), որին կարող են դիմել երիտասարդական ոլորտում փորձառություն ունեցող տեղական, միջազգային կամ հասարակական կազմակերպություններից ներկայացուցիչներ: